Թարգմանություն ֆրանսերենից հայերեն

# Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալություն

ACTED

79184
12.10.2020թ.

## Հասարակական կազմակերպության կանոնադրություն

Փոփոխված է 2014 թվականի հունիսի 21-ի Արտահերթ ընդհանուր ժողովի կողմից

Հոդված 1. Ստեղծումը և անվանումը

Հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1993թ. հոկտեմբերի 13-ին և հրապարակվել 1994թ. մարտի 16-ի Պաշտոնական տեղեկագրում 1736 համարի ներքո: Հասարակական կազմակերպությունը ղեկավարվում է 1901 թվականի հուլիսի 1-ի օրենքով և դրա ենթաօրենսդրական նորմատիվ-իրավական ակտերով, նախնական անվանումը «Տեխնիկական համագործակցությանը և զարգացմանն ուղղված օգնության գործակալություն», այսօր «Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալություն» (այսուհետ «Հասարակական կազմակերպություն»):

2012թ. օգոստոսի 23-ի պրեֆեկտուրայի որոշմամբ, 1901 թվականի հուլիսի 1-ի օրենքի 6-րդ հոդվածի համաձայն «Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալությունը» ճանաչվել է միմիայն օգնության և բարեգործության նպատակով ստեղծված կազմակերպություն:

Հոդված 2. Նպատակը

Հասարակական կազմակերպության նպատակն է Ֆրանսիայում և արտերկրում իրականացնել ցանկացած գործունեություն, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կնպաստի մարդասիրական օգնությանը և շահագրգիռ երկրների զարգացմանը՝ այդ նպատակով ստեղծված հարակից կառույցների կամ Հասարակական կազմակերպության գործընկերների միջոցով:

Ընդհանուր առմամբ, Հասարակական կազմակերպության գործունեության նպատակ է աջակցել կամ իրականացնել համերաշխության ցանկացած գործողություն, ինչպես Ֆրանսիայում, այնպես միջազգային մակարդակում՝ հումանիտար, սոցիալական, մշակութային, տնտեսական բնապահպանական ոլորտներում:

Հոդված 3 Գործողության միջոցները

Ֆրանսիայում և արտերկրում իր նպատակի իրականացման համար Հասարակական կազմակերպությունը մտադիր է օգտագործել գործողության հետևյալ միջոցները, մասնավորապես

- իրականացնել կամ աջակցել ցանկացած համերաշխության գործողության,
- կազմակերպել իր նպատակին վերաբերող ցանկացած հանրային միջոցառում, գովազդային գործողություն, համաժողովներ, սեմինարներ կամ հրապարակումներ.
- կազմակերպել տեղեկատվա-քարոզչական և դրամահավաքի արշավներ և այդ նպատակ ներգրավել ցանկացած գործընկերոջ, որը հետաքրքրված է Հասարակական կազմակերպության առաքելությամբ, նպատակով կամ գործունեությամբ կամ հետագայում հետաքրքրված կլինի

- իր անդամների կամ երրորդ անձանց անունից իրականացնել ցանկացած ուսումնասիրություն հետազոտություն կամ հարցում՝ կապված իր նպատակի հետ,
- նախագծել և զարգացնել համապարտ կամ նորարարական ֆինանսական գործիքներ Հասարակական կազմակերպության կողմից պաշտպանվող գործին աջակցելու համար,
- իրականացնել ցանկացած գործունեություն, տրամադրել ցանկացած ծառայություն կա ապրանք, որը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվել իր նպատակին:

Հոդված 4 Իրավաբանական հասցեն
Իրավաբանական հասցեն գտնվում է 75009Փարիզ, Գոդո դը Մորուա փողոց 33:
Այն կարող է տեղափոխվել նույն դեպարտամենտի տարածքում ցանկացած այլ վայր ՝Տնօրենների խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կայացված որոշմամբ:

Հոդված 5. Գործողության ժամկետը
Հասարակական կազմակերպության գործողության անժամկետը անսահմանափակ է:

Հոդված 6. Անդամներ- Կատեգորիաներ և սահմանումներ
Հասարակական կազմակերպությունը կազմված է հիմնադիր անդամներից, ակտիվ անդամներից հնարավոր համախոհ անդամներից:
- Հիմնադիր անդամներն են՝ Մարի-Պիեռ Կալեյ, Ֆիլիպ Շյու, Սոնիա Ժեդիդի, Ֆրեդերիկ Ռուսէ Հիմնադիր անդամներն ազատվում են տարեկան անդամավճարի վճարումից:

- Ակտիվ անդամներ են՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը հետաքրքրված ճգնաժամային և զարգացող երկրների խնդիրներով, ընդունվում է 7-րդ հոդվածի համաձայ միանում է սույն կանոնադրությանը և պարտավորվում է վճարել Տնօրենների խորհրդի կողմ սահմանված տարեկան անդամավճարը:
-Համախոհ անդամներ են՝ Վարչության կողմից որպես այդպիսին հայտարարված ցանկացս ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Նրանք ազատված են անդամավճարների վճարումից կարող են մասնակցել Ընդհանուր ժողովներին ՝ առանց քվեարկելու իրավունքի: Նրանք չեն կարո ընտրվել Տնօրենների խորհրդի կազմում:

Երբ այն կընդունվի, ցանկացած անդամ անդամակցելիս պետք է երդմամբ հայտարարի, որ լիով տեղյակ է Ընդհանուր ժողովի կողմից ընդունված Հասարակական կազմակերպության էթիկա կանոնագրքի մասին և պարտավորվում է հարգել այն իր անդամության ողջ ընթացքում:

Հոդված 7. Ակտիվ անդամի կարգավիճակի ձեռքբերումը
Հասարակական կազմակերպությունում որպես ակտիվ անդամ կարող են ընդունվել միայն ա անձինք, որոնց համար նախկինում Տնօրենների խորհրդի որևէ անդամի կողմից տրվել երաշխավորագիր և ստացել են Հասարակական կազմակերպության Վարչության հավանություն Վերջինս որոշում է կայացնում է առանց բողոքարկման հնարավորության և նրա որոշումները չ պատճառաբանվում:
Իրավաբանական անձի հաստատումը միշտ կապված է նրա ներկայացուցչի կարգավիճակի հե այնպես որ ներկայացուցչի յուրաքանչյուր փոփոխության համար անհրաժեշտ կլինի հաստատմ նոր ընթացակարգ:

Հոդված 8. Անդամի կարգավիճակի դադարեցումը
Հիմնադիր անդամի կարգավիճակը դադարում է
- կանոնադրությունում որպես հիմնադիր անդամ չլինելու մասին Նախագահին հասցեագրված գրավոր դիմումով: Այս դեպքում կանոնադրության հետագա փոփոխությունը կվավերացվի Արտահերթ ընդհանուր ժողովի կողմից.
- մահվան դեպքում:

Ակտիվ անդամի կամ համախոհի կարգավիճակը դադարում է
- Նախագահին հասցեագրված հրաժարականի գրավոր դիմումով,
- մահվան դեպքում,
-ցանկացած պատճառով, իրավաբանական անձի լուծարման կամ նրա վերակազմակերպման կա դատական կարգով լուծարվելու մասին հայտարարության դեպքում,
- ակտիվ անդամի կողմից անդամավճարը չվճարելու համար Տնօրենների խորհրդի կողմից հայտարարված չեղարկման, անգործության կամ այլ լուրջ պատճառով Վարչության կողմից հայտարարված հեռացման դեպքում: Այս դեպքում շահագրգիռ անձին նախապես հրավիրում են բացատրություններ տալու այն փաստերի մասին, որոնք հնարավոր է արդարացնեն իր հնարավոր հեռացումը և, ընդհանուր առմամբ, պնդելու իր պաշտպանության միջոցները: Այն անդամը, որ ձեռնպահ է մնացել Հասարակական կազմակերպության գործունեությանը (1) մեկից ավելի տար անընդմեջ մասնակցելուց, համարվում է ոչ ակտիվ, բացառությամբ ֆորս մաժորային դեպքերի: Մասնավորապես, լուրջ դրդապատճառներ են համարվում ցանկացած գործողություն, որ ուղղված է Հասարակական կազմակերպության կամ նրա ներկայացուցիչներին զրպարտելուն կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրա հետապնդած նպատակը խարխլելուն:

Հոդված 9. Ռեսուրսները
Հասարակական կազմակերպության ռեսուրսները ներառում են.
- ակտիվ անդամների անդամավճարները,
- ցանկացած ներդրում,
- առձեռն նվիրատվությունները.
- նվիրատվություններ և կտակները՝ բացառապես օգնության և բարեգործության նպատակո ստեղծված կազմակերպության համաձայն, որից Հասարակական կազմակերպությունն օգտվում 1901 թվականի հուլիսի 1-ի օրենքի 6-րդ հոդվածի համաձայն,
- Պետության, համայնքների և պետական հաստատությունների և Եվրամիության, ինչպես նա մարդասիրական օգնության և զարգացման պատասխանատու ցանկացած կազմակերպությա սուբսիդիաները,
- մասնավոր կազմակերպություններից և մասնավորապես հիմնադրամներից ստացվ աջակցությունը,
- Հասարակական կազմակերպությանը պատկանող գույքից, արժեթղթերից և բաժնեմասեր ստացված տոկոսներն ու եկամուտները,
- Հասարակական կազմակերպության վաճառած գույքից, ապրանքներից և ծառայություններ առաջացող լրացուցիչ եկամուտները.
- և ընդհանրապես, բոլոր ռեսուրսները, որոնք թույլատրվում են գործող օրենքներով կանոնակարգերով:

Հոդված 10. Ընդհանուր ժողովները. Ընդհանուր դրույթներ
Ընդհանուր ժողովները բաղկացած են
- հիմնադիր անդամներից,
-ակտիվ անդամներից, իրենց անդամավճարների օրվա դրությամբ, նշված ժողովներին հրավէ ուղարկելու ամսաթվով,
- համախոհ անդամներից, որոնք չունեն քվեարկելու իրավունք:
Իրավաբանական անձինք ներկայացված են իրենց գործող օրինական ներկայացուցիչների կողմ կամ ցանկացած այլ անձի կողմից, որոնց իրավասության մասին ծանուցվել է Վարչությանը:

Ընդհանուր ժողովները գումարվում են Նախագահի կողմից առնվազն յոթ (7) օր առաջ՝ ցանկացա եղանակով (սովորական կամ պատվիրված նամակ, հեռապատճեն, էլ. փոստ հեռահաղորդակցության էլեկտրոնային միջոցներ և այլն):
Հրավերի մեջ նշվում է Վարչության կողմից սահմանված օրակարգը:

Այն նախագահում է Նախագահը, կամ նրա բացակայության դեպքում՝ փոխնախագահը կա Տնօրենների խորհրդի ցանկացած այլ անդամ:
Հասարակական կազմակերպության ցանկացած անդամ կարող է նաև մասնակցել և քվեարկ ժողովներին տեսակոնֆերանսի կամ հեռահաղորդակցության ցանկացած միջոցով, ներառյ ինտերնետը, որը թույլ է տալիս նրան նույնականացնել և տեղեկատվությունը սահուն փոխանցել:
Քվեարկության իրավունք ունեցող անդամները, հետևաբար, կկարողանան մասնակց քննարկումներին՝ առկա ցանկացած էլեկտրոնային եղանակով: Այս դեպքում, այն անդամներ ովքեր մասնակցում են Ժողովին այդ միջոցների օգտագործմամբ, կհամարվեն ներկա՝ քվորումի մեծամասնության հաշվարկման համար:
Յուրաքանչյուր ակտիվ անդամ կարող է ներկայացված լինել մեկ այլ ակտիվ անդամով, այնքան որքանով նա իրեն տրամադրել է անվանական, գրավոր, պատշաճ կերպով ստորագրվ լիազորագիր: Ակտիվ անդամը կարող է ներկայացնել առավելագույնը միայն երկու (2) այլ անդամ
Նախագահը կարող է ցանկացած անձի, որը հատուկ հետաքրքրություն է ցուցաբերո Հասարակական կազմակերպության նկատմամբ, հրավիրելու մասնակցել Ընդհանուր ժողո աշխատանքներին, առանց ձայնի իրավունքի:

Հոդված 11. Հերթական ընդհանուր ժողով
Հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է Նախագահի կողմից:
Հերթական ընդհանուր ժողովը գումարվում է տարեկան (1) մեկ անգամ ֆինանսական տարվ ավարտից հետո (6) վեց ամսվա ընթացքում՝ Տնօրենների խորհրդի գործունեության ֆինանսական հաշվետվությունը հաստատելու, տնօրեններին կառավարմ պարտավորություններից ազատելու, տարեկան հաշվետվությունները հաստատելւ արդյունքները բաշխելու և հնարավոր այլ տարբեր հարցեր քննարկելու համար:
Նա վերլուծում է Հասարակական կազմակերպությանն անդամակցող հիմնական մարմիննե կամ վերջինիս գործընկերների կարգավիճակը և լսում աուդիտորի զեկույցը:
Հերթական ընդհանուր ժողովն ընդունում է Վարչության կողմից առաջարկած Հասարակակ կազմակերպության էթիկայի կանոնագիրքը: Նա յուրաքանչյուր տարի 1/3 մասով նորացնում հեռացող տնօրեններին:
Հերթական ընդհանուր ժողովը կարող է վավեր քննարկում անցկացնել միայն այն դեպքում, ե ներկա են կամ ներկայացված են նրա հիմնադիր և ակտիվ անդամների կեսը:

Առաջին գումարմամբ քվորումի բացակայության դեպքում, Հերթական ընդհանուր ժողովը կրl գումարվում է՝ (8) ութ օր տարբերությամբ և նույն օրակարգով, նա այնուհետև կարող է որոշ կայացնել՝ անկախ ներկա կամ ներկայացված հիմնադիր և ակտիվ անդամների թվից:
Նրա որոշումներն ընդունվում են ներկա կամ ներկայացված անդամների ձայների պւ մեծամասնությամբ:
Ձայների բաշխման դեպքում ժողովի նախագահի ձայնը որոշիչ է:
Հերթական ընդհանուր ժողովի որոշումները ձևակերպվում են գրավոր արձանագրությամ մուտքագրվում են քարտուղարի և Նախագահի կողմից նախաստորագրված գրանցամատյանու

Հոդված 12. Արտահերթ ընդհանուր ժողով
Արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է Նախագահի կողմից:
Միայն նա իրավասու է կատարել հետևյալը.
- սույն կանոնադրության և ասոցիատիվ նախագծի փոփոխություն,
- Հասարակական կազմակերպության գործունեության դադարեցում և լուծարում,
- Հասարակական կազմակերպության միավորում և վերափոխում,
-ինչպես նաև ցանկացած ֆինանսական որոշման համար, որը մեծապես և բացառապես ներա է Հասարակական կազմակերպության ֆինանսները, մասնավորապես `ցանկացած շեն ձեռքբերման, օտարման, պարտատոմսերի և ասոցիատիվ արժեթղթերի թողարկման համար:
Արտահերթ ընդհանուր ժողովը կարող է վավեր քննարկում անցկացնել միայն այն դեպքում, ներկա են կամ ներկայացված են նրա հիմնադիր և ակտիվ անդամների երկու երրորդը (2/3-ը):
Առաջին գումարմամբ քվորումի բացակայության դեպքում, Արտահերթ Ընդհանուր ժողովը կ գումարվում է ՝ ութ (8) օր տարբերությամբ և նույն օրակարգով, նա այնուհետև կարող է քննաr անցկացնել միայն այն դեպքում, եթե ներկա են կամ ներկայացված են հիմնադիր և աl անդամների մեկ քառորդը (1/4):
Արտահերթ ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ներկա կամ ներկայա անդամների երկու երրորդի (2/3) որակավորված մեծամասնությամբ :
Արտահերթ ընդհանուր ժողովի որոշումները ձևակերպվում են գրավոր արձանագրությա մուտքագրվում են քարտուղարի և Նախագահի կողմից նախաստորագրված գրանցամատյանւ

Հոդված 13. Տնօրենների խորհրդի կազմը
Հասարակական կազմակերպությունը ղեկավարվում է Տնօրենների խորհրդի կողմից, կազմված է առնվազն (6) վեց և (20) քսան առավելագույնը տնօրեններից, որոնք ընտրվո Հերթական ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ:
Տնօրենների խորհուրդը յուրաքանչյուր տարի թարմացվում է մեկ երրորդով:
Ակտիվ և հիմնադիր անդամները ընտրվելու իրավունք ունեն Տնօրենների խորհրդում:
Հասարակական կազմակերպության աշխատակիցներն ընտրվելու իրավունք չունեն Տնօրե խորհրդում:
Տնօրենների խորհրդի կազմում չընտրված հիմնադիր անդամները մասնակցում են առանց իրավունքի:

Տնօրենի պաշտոնի թեկնածու լինելու համար անհրաժեշտ է լինել Հասարա կազմակերպության անդամ և չափահաս գործունակ ֆիզիկական անձ:
Նախագահը կարող է օգտակար համարվող ցանկացած անձի հրավիրել մասնակցելու Տնօր խորհրդի նիստերին, առանց ձայնի իրավունքի:

Պաշտոնաթող տնօրենները կարող են վերընտրվել:
Տնօրենի կարգավիճակը դադարում է
- Նախագահին հասցեագրված հրաժարականի գրավոր դիմումով,
- մահվան դեպքում,
- անգործության կամ այլ լուրջ պատճառով Վարչության կողմից հայտարարված հեռացմ դեպքում: Այս դեպքում շահագրգիռ անձը նախապես հրավիրում է բացատրություններ տալու ա փաստերի մասին, որոնք հնարավոր է արդարացնեն իր հնարավոր հեռացումը և, ընդհանո առմամբ, պնդելու իր պաշտպանության միջոցները: Այն տնօրենը, որը Տնօրենների խորհրդի եր (3) անընդմեջ նիստերին անհարգալի չի ներկայացել համարվում է ոչ ակտիվ:
Մասնավորապես, լուրջ դրդապատճառներ են համարվում ցանկացած գործողություն, ո ուղղված է Հասարակական կազմակերպությանը կամ նրա ներկայացուցիչներին զրպարտելու կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրա հետապնդած նպատակը խարխլելուն:
Նրա անդամներից մեկի թափուր հաստիքի դեպքում, որը նվազեցնում է նրանց թիվը նվազագո շեմից ցածր, Տնօրենների խորհուրդը ժամանակավորապես նախատեսում է նրան փոխարինումը Այն վերջնականորեն փոխարինումը կատարվում է հաջորդ Ընդհանուր ժողովի ժամանս Այնպիսով ընտրված անդամի պաշտոնավարման ժամկետը կլրանա նույն օրը, ինչ փոխարին տնօրենինը:
Տնօրենների խորհրդի անդամների գործառույթները տրամադրվում են անվճար:
Տնօրենի պարտականությունների կատարման հետ կապված կատարված ծախսերն վճարումները փոխհատուցվում են հիմնավորող փաստաթղթերի հիման վրա:

## Հոդված 14. Տնօրենների խորհրդի գործունեությունը

Տնօրենների խորհուրդը գումարվում է տարեկան առնվազն երեք (3) անգամ և, անհրաժեշտությ դեպքում, Նախագահի հրավերով:
Հրավերներն ուղարկվում են ցանկացած եղանակով (սովորական կամ պատվիրված նամ հեռապատճեն, էլ. փոստ, հեռահաղորդակցության էլեկտրոնային միջոցներ և այլն), հնարավոր սեղմ ժամկետներում, մինչև նիստի նշանակված ամսաթիվը:
Այն կարող է վավեր քննարկում անցկացնել միայն այն դեպքում, եթե ներկա անդամնե ներկայացնում են իր ընտրած անդամների կեսից ավելին:
Տնօրենների խորհրդի ցանկացած անդամ կարող է նաև մասնակցել և քվեարկել այս կոլեգ մարմնի նիստերին տեսակոնֆերանսի կամ հեռահաղորդակցության ցանկացած միջոց ներառյալ ինտերնետը, որը թույլ է տալիս նրան նույնականացնել և տեղեկատվությունը սահ փոխանցել:
Տնօրենների խորհրդի որոշումներն ընդունվում են ներկա անդամների ձայների պ մեծամասնությամբ: Ձայների բաշխման դեպքում Նախագահի ձայնը որոշիչ է: Որոշումն ձևակերպվում են գրավոր արձանագրությամբ և մուտքագրվում են Խորհրդի առնվազն երկու անդամի կողմից նախաստորագրված գրանցամատյանում:

## Հոդված 15. Տնօրենների խորհրդի լիազորությունները

Տնօրենների խորհուրդը սահմանում է Հասարակական կազմակերպության ընդհան քաղաքականության ընդհանուր ուղղությունները: Տնօրենների խորհուրդը ընդունում գործունեության և ֆինանսական հաշվետվությունը, որում նախանշվում է Հասարակակա կազմակերպության անցած ֆինանսական տարվա գործունեությունը, և որում զեկուցվում է կառավարման մասին, որը կներկայացվի Հերթական ընդհանուր ժողովին: Տնօրենների խորհո փակում է անցած ֆինանսական տարվա հաշվետվությունները և առաջարկում արդյու բաշխումը 11-րդ հոդվածի դրույթներին համապատասխան ժամկետներում:

Տնօրենների խորհուրդը որոշում է կայացնում Առևտրային օրենսգրքի L. 612-5 հոդվածում նշվ համաձայնագրերի վերաբերյալ, որոնք իրեն է ներկայացվում են Նախագահի կամ աուդիտոր կողմից: Նա վերահսկում է Վարչության գործունեությունը և աշխատանքը: Վարչությունը իր զեկուցում է իր հանձնարարությունների մասին:
Տնօրենների մեկ երրորդը տարեկան կտրվածքով փոխելու համար գումարվող յուրաքանչյու Ընդհանուր ժողովից հետո և յուրաքանչյուր անգամ երբ կա դրա անհրաժեշտությունը, Տնօրեններ խորհուրդը նիստ է անցկացնում՝ իր անդամներից Նախագահ, հնարավոր մեկ կամ մի քան փոխնախագահներ, քարտուղար, հնարավոր քարտուղարի օգնական, գանձապահ, հնարավո գանձապահի օգնական ընտրելու համար:
Դրանից հետո սահմանվում է տարեկան անդամավճարի չափը:

Հոդված 16. Վարչության կազմը
Տնօրենների խորհուրդն իր անդամներից գաղտնի քվեարկությամբ նշանակում է առնվազն չորս (4 և առավելագույնը տաս (10) անդամներից բաղկացած Վարչություն, ներառելով մասնավորապե Նախագահին, Փոխնախագահին, Քարտուղարին և Գանձապահին:
Վարչության անդամները՝ նշանակվում են մեկ (1) տարի ժամկետով ՝Ընդհանուր ժողովի հաջորդող առաջին Տնօրենների խորհրդի ընթացքում:
Դուրս եկող անդամները կարող են վերընտրվել: Վարչության անդամի գործառույթներ դադարում են.
- Նախագահին հասցեագրված հրաժարականի գրավոր դիմումով,
-տնօրենի կարգավիճակը կորցնելու դեպքում,
- մահվան դեպքում,
- անգործության կամ այլ լուրջ պատճառով Վարչության կողմից հայտարարված հեռացմա դեպքում: Այս դեպքում շահագրգիռ անձը նախապես հրավիրում է բացատրություններ տալու այ փաստերի մասին, որոնք հնարավոր է արդարացնեն իր հնարավոր հեռացումը և, ընդհանու առմամբ, պնդելու իր պաշտպանության միջոցները: Վարչության այն անդամը, որը Վարչությա չորս (4) անընդմեջ նիստերին անհարգալի չի ներկայացել համարվում է ոչ ակտիվ:
Մասնավորապես, լուրջ դրդապատճառներ են համարվում ցանկացած գործողություն, որ ուղղված է Հասարակական կազմակերպությանը կամ նրա ներկայացուցիչներին զրպարտելուն կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրա հետապնդած նպատակը խարխլելուն:
Նախագահը կարող է ցանկացած անձի, որին կարելի է օգտակար համարել, հրավիրե մասնակցելու Վարչության նիստերին ՝ առանց ձայնի իրավունքի:

Հոդված 17. Վարչության գործունեությունը
Վարչության նիստերը գումարվում են տարեկան (10) տասից (12)տասներկու անգամ Նախագահի հրավերով, որը սահմանում է իր օրակարգը:
Հրավերը կարող է կատարվել ցանկացած եղանակով (սովորական կամ պատվիրված նամակ, առձեռն, էլ.փոստ, հեռահաղորդակցության էլեկտրոնային միջոցներ և այլն), հնարավորին ողջամիտ ժամկետներում մինչև ժողովի անցկացումը:
Որոշումներն ընդունվում են ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների բաշխման դեպքում, Նախագահի ձայնը որոշիչ է:
Վարչության ցանկացած անդամ կարող է նաև մասնակցել և քվեարկել այս կոլեգիալ մարմնի նիստերին տեսակոնֆերանսի կամ հեռահաղորդակցության ցանկացած միջոցով, ներառյալ ինտերնետը, որը թույլ է տալիս նրան նույնականացնել և տեղեկատվությունը սահուն փոխանցել:
Վարչության նիստերի արձանագրությունները պահվում են հատուկ թղթապանակներում և ստորագրվում են Նախագահի և Քարտուղարի կողմից:

Վարչության անդամը իր գործառույթների համար չի վարձատրվում: Սակայն Վարչությա
Վարչության անդամը իր գործառույթների կատարման համար կատարված ծախսերի
անդամներն իրավունք ունեն իրենց գործառույթների կատարման համար կատարված ծախսերի
դիմաց պահանջելու փոխհատուցում՝ ներկայացնելով հիմնավորող փաստաթղթեր:

Հոդված 18. Վարչության լիազորությունները
Չխախտելով այսուհետև նշված իրենց համապատասխան լիազորությունները, Վարչություն
կոլեկտիվ ապահովում է Հասարակական կազմակերպության ընթացիկ կառավարումը: Այ
նպատակով Վարչությանը վերապահված են ամենալայն լիազորությունները՝ ապահովել
Հասարակական կազմակերպության պատշաճ գործունեությունը կանոնադրությա
նախատեսված իր նպատակի սահմաններում և սույն կանոնադրությամբ նախատեսված ա
մարմինների և անձանց համար հստակ վերապահված լիազորությունները :
Այդ նպատակով Վարչությունը, մասնավորապես, պատասխանատու է հետևյալի համար.
Այդ նպատակով Վարչությունը, մասնավորապես, պատասխանատու է հետևյալի համար. Տնօրենների խորհրդի անդամի երաշխավորությունից հետո,

- հաստատել ակտիվ անդամներին՝ Տնօրենների խորհրդի անդամի երաշխավորությունից հետո,
- նշանակել համախոհ անդամներ,
- կատարել Տնօրենների խորհրդի որոշումների և ներկայացնել հաշվետվություն,
- պատրաստել Ընդհանուր ժողովների և Տնօրենների խորհրդի նիստերը և սահմանել օրակարգեր
- պատրաստել Հասարակական կազմակերպության հաշիվների նախագծերը, բյուջեները և վերահս
- ստուգել Հասարակական կազմակերպության հաշիվների նախագծերը, բյուջեները և վերահսկել
դրանց կատարումը,
- սահմանել կապի և հանրության հետ կապերի հիմնական ուղղությունները,
- հաստատել Հասարակական կազմակերպության կանոնակարգը.
- հաստատել Հասարակական կազմակերպության էթիկայի կանոնագիրքը Հերթակ
- պատրաստել Հասարակական կազմակերպության էթիկայի կանոնագիրքը Հերթական
ընդհանուր ժողովի կողմից հաստատման նպատակով:
- թույլատրել այնպիսի գործողություններ և պարտավորություններ, որոնք դուրս են Նախագ
լիազորությունների սահմաններից և կարող է Հասարակական կազմակերպության Վարչութ
անդամին, տնօրենին կամ Գլխավոր տնօրենին տալ ցանկացած վերալիազորություն հա
որոշման հանձնարարության համար:

Հոդված 19. Նախագահ
Նախագահը համատեղում է Վարչության, Տնօրենների խորհրդի և Հասարակա
կազմակերպության նախագահի պաշտոնները:
Նա գործում է Վարչության, Տնօրենների խորհրդի և Հասարակական կազմակերպության անո
և մասնավորապես.

- ներկայացնում է Հասարակական կազմակերպությունը քաղաքացիական կյանքի
գործողություններում և ունի այն ներկայացնելու բոլոր լիազորությունները,
- իրավունք ունի Հասարակական կազմակերպությունը ներկայացնելու դատարանում, ին
որպես հայցվոր, այնպես էլ որպես պատասխանող: Նրան կարող է փոխարինել միայն հա
լիազորագրով գործող լիազորված անձը,
- ապահովում է Հասարակական կազմակերպության պատշաճ իրավական գործունեությունը
- կարող է Վարչության նախնական թույլտվությամբ հայց ներկայացնել դատ
Հասարակական կազմակերպության շահերի պաշտպանության համար, համաձայնվել
գործարքների հետ և ներկայացնել բողոքներ:
- գումարում է Վարչության, Տնօրենների խորհրդի և Ժողովների նիստերը և վարում է դրանք,
- կատարում է Վարչության և Տնօրենների խորհրդի կողմից ընդունված որոշումները,
- գործունեության տարեկան հաշվետվությունն է ներկայացնում Ընդհանուր ժողովին,
- Ընդհանուր ժողովին ներկայացնում է Առևտրային օրենսգրքի L. 612-5 հոդվածում նշված զե
- ծանուցում է հաստիքային աուդիտորին Առևտրային օրենսգրքի L. 612-5 հոդվածում
պայմանագրերի մասին դրանց մասին տեղեկանալու օրվանից մեկ (1) ամսվա ընթացքում:

Նախագահը նաև ապահովում է Հասարակական կազմակերպության ֆինանսակա կառավարումը, և մասնավորապես.

- կանոնակարգում է ծախսերը, ներկայացնում է տարեկան բյուջեները և վերահսկում է դրա կատարումը,
- իրականացնում է կամ իր վերահսկողության ներքո հանձնարարում է իրականացնել վճարումը եկամուտների հավաքագրումը,
- կառավարում է կամ իր վերահսկողության ներքո հանձնարարում է կառավարել Հասարակակա կազմակերպության գանձարանը,
- կոչ է անում վճարել տարեկան անդամավճարները,
- իրավասու է ցանկացած վարկային կամ ֆինանսական հաստատությունում բացել և գործարկ ցանկացած հաշիվ և ցանկացած խնայողական հաշիվ,
- որոշում է կայացնում ցանկացած շարժական գույքի և շարժական օբյեկտների ձեռքբերման օտարման, հանձնարարում է կատարել նորոգումներ, աշխատանքներ, ինչպես նաև գնում վաճառում է ցանկացած արժեթղթեր,
- Արտահերթ ընդհանուր ժողովի նախնական թույլտվությամբ վարձակալում և ձեռք է բեր Հասարակական կազմակերպության նպատակի իրականացման համար անհրաժեշտ ցանկաց անշարժ գույք, տրամադրում է Հասարակական կազմակերպության շենքերի վարձակալության գրավադրման իրավունքը, վաճառում և փոխանակում է վերևում նշված գույքերը,
- տալիս է ցանկացած փոխառություն և երաշխիք,
- ստորագրում է առուվաճառքի ցանկացած պայմանագիր և, ընդհանուր առմամբ, բոլոր ակտերն պայմանագրերը, որոնք անհրաժեշտ են Վարչության, Տնօրենների խորհրդի և Ժողովնե որոշումների կատարման համար:

Վերջապես, Նախագահը ընդունում և աշխատանքից ազատում է աշխատակազմին և նշանակ է Հասարակական կազմակերպության Գլխավոր տնօրենին, որը պատասխանատու Հասարակական կազմակերպության ընթացիկ կառավարման համար և դադարեցնում է ն պարտականությունները: Նա հստակեցնում է նրա գործառույթների բնույթը և լիազորությունն չափը:

Նախագահի բացակայության կամ անկարողունակության դեպքում փոխնախագա ժամանակավորապես ստանձնում է նրա գործառույթները:

Նախագահը կարող է իր պատասխանատվության ներքո, մասնակիորեն իր լիազորությունն փոխանցել Հասարակական կազմակերպության Գլխավոր տնօրենին: Լիազորությունների փոխանցումը կազմվում է գրավոր և սահմանում է առավելագույն գումարի չափը, որի հա տրվում է լիազորությունը:

Անհրաժեշտության դեպքում, լիազորությունների փոխանցմամբ կարող է լինել վերալիազոր եթե Նախագահը լիազորել է այդպիսի վերալիազորում, և վերալիազորված անձանց տրվե հմտություններ, լիազորություններ և իրենց տրված հանձնարարությունների իրականաց համար անհրաժեշտ միջոցներ:

Հնարավոր ցանկացած լիազորում և վերալիազորում պետք է պարտադիր գրա համաձայնեցվի, զերծ լինի ցանկացած երկիմաստությունից և հստակեցնի լիազորության ճշգ շրջանակը:

## Հոդված 20. Փոխնախագահ

Փոխնախագահը աջակցում է Նախագահին իր գործառույթների իրականացման ընթացքո փոխարինում է նրան, եթե նա չի կարող մասնակցել:

## Հոդված 21. Գանձապահ

Գանձապահը կազմում կամ իր վերահսկողության ներքո հանձնարարում է կա ... տարեկան հաշվետվությունները (հաշվեկշիռ, շահույ

վնասի հայտարարագիր և հավելվածներ): Նա կազմում կամ հանձնարարում է կազւ ֆինանսական հաշվետվությունը, որը տարեկան հաշվետվությունների հետ միասին ներկայացնո է Հերթական ընդհանուր ժողովին:
Նա կարող է իր լիազորությունները գրավոր ձևով փոխանցել, նա կարող է ցանկացած պա դադարեցնել նշված լիազորությունները:

Հոդված 22. Քարտուղար
Քարտուղարն ապահովում է Հասարակական կազմակերպության պատշաճ նյութակս վարչական և իրավական գործունեությունը: Նա կազմում է կամ կամ իր վերահսկողության ներ հանձնարարում է կազմել Վարչության, Տնօրենների խորհրդի և Ընդհանուր ժողովների նիստե արձանագրությունները:
Նա նաև վարում է 1901 թվականի հուլիսի 1-ի օրենքի 5-րդ հոդվածով նախատեսվւ գրանցամատյանը:
Նա կարող է իր լիազորությունները գրավոր ձևով փոխանցել, նա կարող է ցանկացած պա դադարեցնել նշված լիազորությունները:

Հոդված 23. Գլխավոր տնօրեն
Նախագահը կարող է նշանակել Գլխավոր տնօրեն, որը պատասխանատու է Հասարակակա կազմակերպության ընթացիկ կառավարման համար և դադարեցնել նրա գործառույթները:
Այդ նպատակով Նախագահը լիազորման միջոցով նշում է իր գործառույթների բնույթը, լիազորությունների շրջանակը և նյութական, տեխնիկական, մարդկային և ֆինանսակւ ռեսուրսները, որոնք Գլխավոր տնօրենին կարող են անհրաժեշտ լինել իր պարտականություննե կատարման ընթացքում:
Գլխավոր տնօրենը կունենա բոլոր անհրաժեշտ լիազորությունները իր հրամանի համաձս աշխատող և իր պատասխանատվության տակ գտնվող անձնակազմի նկատմամբ:
Գլխավոր տնօրենը պետք է Նախագահին պարբերաբար տեղեկացնի իրեն վերապահվւ հանձնարարությունների իրականացման ձևի, հանդիպած դժվարությունների կամ այն միջոցնե մասին, որոնց անհրաժեշտությունն ունի : Գլխավոր տնօրենից պարտավոր է նաև ենթականերից պահանջելու պարբերաբար իրեն զեկուցել հանդիպած դժվարությունների մասին ինքնուրույն ստուգումներ կատարել համոզվելու համար, որ իր ցուցումները խստո պահպանվում են:
Գլխավոր տնօրենը կարող է իր լիազորությունների մի մասը և նախագահից ստացվւ ստորագրությունը սույն կանոնադրությանըհամաձայն փոխանցել մեկ կամ ավելի անձանց:
Նա առանց ձայնի իրավունքի մասնակցում է Տնօրենների խորհրդի և Վարչության նիստերին:

Հոդված 24. Մասնագիտացված կոմիտեներ
Վարչությունը կարող է ստեղծել մասնագիտացված կոմիտեներ, որոնց կազմի, նպատակի ործունեության կանոնների մասին կայացնում է որոշում, ինչպես նաև նշանակում ախագահին և զեկուցողին:

դված 25. Ֆինանսական տարին
նանսական տարին տևում է մեկ (1) տարի: Այն սկսվում է հունվարի 1-ին և ավարտվո կտեմբերի 31-ին:

դված 26. Հաշվապահական հաշվառում

Հաշվապահական հաշվառումը  վարվում է Ֆրանսիական առևտրային օրենսգրքում և դ
կիրառման համար ընդունված տեքստերում, մասնավորապես ՝ ՀԴԿ 99-01 կանոնակարգ
սահմանված հաշվապահական սկզբունքների և մեթոդների համաձայն:
Հաշվապահական հաշվառումը  վարվում է գանձապահի վերահսկողության ներքո:
Հասարակական կազմակերպությունը յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո
(6) ամսվա ընթացքում կազմում է տարեկան հաշվետվությունները՝ ընդհանուր հաշվապահակ
հաշվառման ստանդարտներին համապատասխան, կանոնակարգերը և 1999 թ. փետրվարի 1
իր հավելվածով նախատեսված փոփոխությունները հաշվի առնելով, որոնք վերաբերում
Հասարակական կազմակերպության տարեկան հաշվետվության ստեղծման պայմաններին:.
Տնօրենների խորհրդի կողմից պատշաճ կերպով հաստատված տարեկան հաշվապահակ
հաշվետվությունները (հաշվեկշիռ, շահույթի և վնասի հայտարարագիր և հավելվածն
Տնօրենների խորհրդի կողմից պատշաճ կերպով հաստատված գործունեության հաշվետվությո
և ֆինանսական հաշվետվությունը և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը  հասանել
դարձվում անդամներին Հերթական ընդհանուր ժողովից յոթ (7) օր առաջ, որը գումարվու
փակված ֆինանսական տարվա հաշիվների վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:
Հերթական ընդհանուր ժողովը յուրաքանչյուր տարի որոշում է կայացնում անցած ֆինանսա
տարվա հաշիվների վերաբերյալ:

Հոդված 27. Լուծարում
Միաձուլմանը չհաջորդող լուծարման դեպքում  Արտահերթ ընդհանուր ժողովը նշանակում է
կամ մի քանի լուծարային կառավարիչներ, որոնք պատասխանատու են լուծար
գործառնությունների համար:
Նա հայտարարում է զուտ ակտիվների փոխանցումը ՝ 1901 թվականի հուլիսի 1-ի օրենքի
հոդվածի և դրա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համաձայն:
Լուծարման գործողություններից հետո մնացած Հասարակական կազմակերպության բ
շարժական ակտիվներն առաջնահերթության կարգով կտրամադրվեն հանրային և (կամ) շահ
չհետապնդող կազմակերպություններին ՝ համաձայն սույն կանոնադրության:

Հոդված 28. Ընթացակարգի կանոնները
Անհրաժեշտության դեպքում Վարչությունը կարող է սահմանել Ներքին կանոնակարգեր, ո
նախատեսված են Հասարակական կազմակերպության գործունեության վերաբե
կանոնադրական դրույթները ճշգրտելու և լրացնելու համար:
Միայն նա իրավասու է դրանք փոփոխելու կամ չեղյալ համարելու համար:
Ներքին կանոնակարգերը, ինչպես կանոնադրությունը պարտադիր են Հասարակա
կազմակերպության ներկա և ապագա անդամների համար:

Կազմվել է Փարիզում, 2014 թվականի հունիսի 21-ին, վեց (6) օրինակով:

Իլ-դը-Ֆրանս,  Փարիզի շրջանի Առևտրաարդյունաբերական պալատ
Նախագահ
Դավիդ Մալերոն
Նախատեսված է բացառապես Մարի-Պիեռ Կալեյի ստորագրության փաստացի վավերա
համար:
ստորագրություն/

Յոնիս Ժեդիդի
Նախագահ
Պատշաճ կերպով լիազորված 2013թ. հունիսի 22-ի Արտահերթ ընդհանուր ժողովի կողմից:

/ստորագրություն/

Ֆրեդերիկ Դոե

Գանձապահ

Պատշաճ կերպով լիազորված 2013թ. հունիսի 22-ի Արտահերթ ընդհանուր ժողովի կողմից:

/ստորագրություն/

ACTED –Ֆրանսիա, 75009 Փարիզ, Գողո դը Մորուա փողոց 33
Հեռ +33 1 42 65 33 33, Հեռապատճեն + 33 1 42 65 33 46
Էլ. փոստ paris@acted.org
Site web www.acted.org

ԱՊՈՍՏԻԼ

(1961թ. հոկտեմբերի 5-ի Հաագայի կոնվենցիա)

Հայաստան

1. Ֆրանսիայի Հանրապետություն
   Սույն վավերացված փաստաթուղթը
2. ստորագրված է Դավիդ Մալեդոնի կողմից
3. որն աշխատում է որպես կցորդ
4. կնքված է Փարիզի Առևտրաարդյունաբերական պալատի կնիքով

ՎԱՎԵՐԱՑՎԱԾ

5. Փարիզում 6. 13 հոկտեմբերի 2020թ.
7. Փարիզի Վերաքննիչ դատարանին առընթեր գլխավոր դատախազի կողմից
8. Գրանցման համարը 10068
9 Կնիք 10. (ստորագրություն) Առաջին գլխավոր փաստաբան Միշել Լեռնու

*Ապոստիլը հաստատում է միայն փաստաթղթում առկա ստորագրության, կնիքի կամ դրոշմանիշի իսկությունը և չի նշանա փաստաթղթի բովանդակությունը ճիշտ է կամ Ֆրանսիայի Հանրապետությունը հաստատում է դրա բովանդակությունը:*

Թարգմանիչ Լուսինե Գևորգյան

**Նոտարական ակտի կոդ:** 545-20201030-67-4784741
**Նոտարական ակտի գաղտնագիր:** RVM8S0

երկու հազար քսան թվականի հոկտեմբերի երեսուն

Ես, ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար՝ ԱՏՈՄ ԳՐԻԳՈՐԻ
վավերացնում եմ տվյալ տեքստի ֆրանսերեն լեզվից հայերեն լեզ
ստորագրության իսկությունը:
<Նոտարիատի մասին> ՀՀ օրենքի 68 հոդվածի համաձայն հաստատում
թարգմանությունը կատարած թարգմանչի ստորագրության իսկությունը, ա
շարադրված փաստերը:

Գրանցված է գրանցամատյանում թիվ 12204

Գանձված են պետական տուրք հինգ հարյուր ՀՀ դրամ և հինգ հարյուր ՀՀ դր
վճար, համաձայն <Պետական տուրքի մասին> և <Նոտարիատի մասին> ՀՀ

Նոտար ---------------------------------------------- Ատոմ Գրիգորիի Հայրապետ